ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա. Բէլաձորի

Աբուլ Աբբաս Ահմեդ ալ Բէլաձորի Բաղդադից յայտնի էր իբրեւ պատմագիր եւ քերթող, որ ամիրապետ Ջաֆար ալ Մութավաքքիլի սէրը եւ մտերմութիւնն կը վայելէր։ Վախճանեցաւ 892 թ., սխալմամբ ընդունած լինելով մեծ քանակութեամբ belâdsor anacordia, որի համար ստացած է իր մականունն։ Նորա ամենանշանաւոր գրութիւնն է՝ "Երկրների նուաճման գիրք" (كتاب فتوح البلدان), որի մի գլուխը կը կազմէ "Հայաստանի նուաճումն"։ Նիւթը սակայն աւելի ընդարձակ է, քան ցոյց է տալիս վերնագիրը, ամփոփելով իր մէջ եւս Աղուանից, Վրաց եւ կովկասեան ինչ ինչ ցեղերի նուաճման համառօտ պատմութիւնն։ Ոմանք կը կարծեն, որ Բելաձորի այս աշխատութիւնն նորա աւելի ընդարձակ, բայց չաւարտած գրութեան միայն համառօտութիւնն է։

(Կրճատումն ը. = իբն = որդի)

Ինձ պատմել է Պարտաւի՝ բնակիչ Մահմեդ բ. Իսմայիլ եւ այլ մէկը՝ Աբի բարայ Ան-

---

1 بَرْذَعَة (Բարզաա) ուտէական մայրաքաղաքի արաբական անունն է. Istaxri (Ժ. դ.) իր "Աշխարհից գրքում" հետեւեալ մանրամասնութիւնները կը հաղորդէ քաղաքիս մասին. "Պարտաւ շատ մեծ քաղաք է, երկարութեամբ եւ լայնութեամբ աւելի քան մի փարսախ. կը գտանուի ախորժելի եւ պտղաբեր տեղում... ⅓ փարսախ Պարտաւից հեռու կ'անցնի Կուր (գետը), ուր կ'որսան Դու-րաքէն եւ Ասուբ կոչուած ձկներ... Պարտաւի եւ Շամքորի բնակիչք հայկական ծագում ունին եւ կը կոչւին Սեւ-որդէ (Սեւորդիք)։" Քաղաքիս ճանցորդը գուցէ այժմեան Պէրդէ գիւղի մօտ է պտրելու, Տէրտէր (تُرتُر) գետի ափին։ Քաղաքիս անունն կը յիշէ դեռ Ասորեստանի թա-